Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՆԻ ԱՐԹՈՒՐԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ «ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական տնտեսության պայմաններում բյուջետային համակարգը տնտեսական զարգացման գործում ձեռք է բերում առանձնահատուկ դեր, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ մի կողմից աճում են պետության և հասարակության ծախսային կարիքները, իսկ մյուս կողմից դրսևորվում է ֆինանսական միջոցների խրոնիկ անբավարարություն: Նման իրավիճակում պետության առաջնահերթ խնդիրն է դառնում նվազագույն ծախսերով առավելագույն ծրագրերի ֆինանսավորումը, ինչը բավականաչափ բարդ, սակայն հրատապ լուծման կարիք ունեցող հիմնախնդիր է: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում բյուջետային ծախսերի արդյունավետության և հիմնավորվածության ապահովման խնդիրները, որոնց լուծման պարագայում կարելի է միայն ակնկալել սահմանափակ ռեսուրսների ռացիոնալ և նպատակային օգտագործում:

Պետք է նշել, որ չնայած քաղաքական և տնտեսական բարեփոխումների անցած տարիներին Հայաստանի Հանրապետությունում այդ ուղղությամբ իրականացված քայլերին, դեռևս չի հաջողվել հասնել բյուջետային ծախսերի արդյունավետության բավարար մակարդակի: Դա, ի թիվս սուբյեկտիվ գործոնների, մեծապես պայմանավորված է նաև բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման մեթոդաբանության բացակայությամբ, ինչի հետևանքով շատ դեպքերում առկա են տարաբնույթ մեկնաբանություններ բյուջետային ծախսերի արդյունավետության և հիմնավորվածության վերաբերյալ:

Նշված խնդիրների և դրանց լուծման ուղիների բացահայտմանն է նվիրված աշխատանքը, որով էլ պայմանավորված է դրա ***հրատապությունն ու արդիականությունը:***

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ «Բյուջետային քաղաքականության տեսական և մեթոդական հիմքերը»*** ներկայացվել են բյուջեի էությունը և դերը տնտեսության պետական կարգավորման գործընթացում, բյուջետային քաղաքականության նպատակները և բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման հիմնահարցերը:

Հետազոտության ***երկրորդ՝ «Բյուջետային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում*** վերլուծության են ենթարկվել բյուջետային քաղաքականության օրենսդրահիրավական ապահովվածության հիմքերը, դրա իրականացման հիմնական ուղղությունները և ծախսերի դինամիկան, ինչպես նաև բացահայտվել են բյուջետային քաղաքականության հիմնախնդիրները:

Աշխատանքի ***երրորդ՝ «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղղությունները ՀՀ-ում» գլխում*** մշակվել և ներկայացվել են բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման և հիմնավորվածության ապահովման հիմնական մոտեցումները:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության

ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ մշակվել են բյուջետային ծախսերի արդյունավետության ապահովման հիմնական ուղիները և դրա գնահատման մեթոդաբանական հիմքերը, բացահայտվել և համակարգվել են բյուջետային ծախսերի հիմնավորվածության ապահովման հիմնախնդիրները, առաջարկվել է դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համալիր՝ բյուջետային ծախսերի պլանավորման և իրականացման փուլերում հաջորդական քայլերի ներկայացմամբ, մշակվել է բյուջետային ծախսերի պլանավորման բազմափուլ մոտեցում՝ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նպատակների հիման վրա բյուջետային ծախսերի գերակայությունների սահմանումից մինչև բյուջետային ծախսերի իրականացումն ապահովող իրավական և մեթոդական ապահովվածության ուղիների ամրագրմամբ:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Դրանք կարող են լայնորեն օգտագործվել հանրապետությունում տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման ընթացքում: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից***, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Ատենախոսությունում բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման և հիմնավորվածության ապահովման ուղղությամբ հեղինակի կողմից իրականացված վերլուծություններն ու առաջարկությունները բավականաչափ ուշագրավ են: Միևնույն ժամանակ, երկրի զարգացման ռազմավարական պլանավորման համատեքստում դրանց դիտարկումը զգալիորեն կբարձրացներ աշխատանքի գիտագործնական նշանակությունը:
2. Աշխատանքում ծրագրային բյուջետավորման համակարգի գործունեությունը հիմնականում քննարկվել է դրա բացթողումների և թերությունների տեսանկյունից:

Համաձայն լինելով հեղինակի կողմից դրա վերաբերյալ ներկայացված փաստարկների և հիմնավորումների հետ՝ կարծում ենք, որ աշխատանքում պետք է նաև համակողմանի անդրադարձ կատարվեր ծրագրային բյուջետավորման դրական կողմերին, վերջին տարիներին դրա գործողության արդյունքում արձանագրված ձեռքբերումներին և արդյունքներին:

3. Բյուջետային ծախսերի հիմնավորվածությունն, անշուշտ, կարևոր նախապայման է հանդիսանում բյուջետային քաղաքականության նպատակայնության և հասցեականության բարձրացման, ինչպես նաև պետության առջև ծառացած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների երկարաժամկետ և համապարփակ լուծման համար: Միևնույն ժամանակ, այն կրում է բազմաթիվ, այդ թվում՝ նաև ոչ տնտեսական բնույթի գործոնների ազդեցությունը, ինչի վերաբերյալ աշխատանքում կատարված ուսումնասիրություններն աչքի չեն ընկնում իրենց խորությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են բյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերին նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Ա. Աղաբաբյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակն ակնհայտորեն բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել բյուջետային ոլորտի բարեփոխումների իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության

բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ա. Աղաբաբյանի «Բյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ,

Տնտեսագիտական գիտությունների թեկնածու՝

Լ. Ս. Սարգսյան _____

10.01.2025թ.

Տ.գ.թ. Լ. Ս. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ֆինանսների նախարարության

գլխավոր քարտուղար (գիտական քարտուղար)՝

_____ Ա. Լ. Եսայան

10.01.2025թ.